

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Տարեկան ծրք 10

Վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԳԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան ծրք 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԳԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարստ օրերը : Ծա-
նոցման տողը 10 Սանդիս : Երկու ք/ո ա-
ռաջ հրատարակուած քերթը 40 Սանդիս :
Զհրատարակուած գրութիւնը եւ յտն/ր :

Հասցե

DIAN PAPA ZIAN

RUE DRAGOMAN K. STEPAN

(BULGARIE)

VARNA

ԱԶԳԱՅԻՆ

—0—

Հայկական նպատաստմատոյց Գանձնա-
ժողովոյն նախագահ Աւստրալիական Գործը
հետեւեալ նամակը ստացած է Պ. Էտուարտ
Միլարտէն , որ Գանձնաժողովոյ հաշտոյն Փոքր
Ասիա կը ճամբորդէ նպատակաւ բաշխելու համար :

Խորհրդ. 20 Գեկտ. 1897

Վսեմապատիւ Միլարտ,

Այստեղ հասնելով սկսայ տեղական
կացութիւնը խնամով ուսումնասիրել :
Հարկ է անմիջապէս հիմնել որբանոց մը
հինգ հարիւր որբ պատուարելու հա-
մար : Շինութեան ծախք եայլն կը հաշ-
ուի 2000 անգլ. ոսկի եւ պատասպարանի
տարեւան ծախքը՝ 1800 : Այն նահանգ-
ները ուր տրվէն շրամական նպատակ
բաշխուած է՝ ճարտարագործութիւնը ըս-
կաւ վերականգնանալ . ոստայնանի-
ները վերականգնելու իրենց աշխատութիւնը
եւ տուններու մեծ մասը շինուեցան ու
նորոգուեցան : Արաքիլի որ ամենէն ա-
ւերակ քաղաքներէն մէկն էր , սկսած է

ինքզինքը գտնել : Պէտք է սակայն հա-
տարաւ թիւնը տեղեւոյ ըլլայ թէ մեր
պահեստի գումարէն չափ քիչ բան մնա-
ցած է : Թշուառութիւնը դեռ չափ մեծ
է . միջոցներ կը խռնուին կոր որբանոց-
ներու թիւը ստուարացնելու եւ այլի
կիներուն նպատակներ յատկացնելու որ-
պէս զի հիւսուածագործութեամբ եւ զար-
գանկարչութեամբ իրենց օրապահիկը
հայթայթելու կարող ըլլան :

Տեղական մասնախումբը կազմուե-
ցան հեռաշրջանակներու կացութեան
դարման տանելու նպատակով : Խորհրդ-
դի ժողովուրդը իր նախաձեռնութեամբ
Մասնախումբ մը կազմեց եւ ամենէն
կարօտեալներուն սկսած է նպատակ
բաշխել . վերջին երկու շաբթուան մէջ այս
նպատակաւ հանգանակութիւն կատա-
րուելով 20 ոսկի հաւաքուեցաւ : Նպատ-
տամատոյցներուն մէջ կը գտնուի անձ
մը որ ժամանակաւ ահագին հարստու-
թեան տէր էր եւ որ վերջերս աւուր
հացի կարօտ մնացած ըլլալով միսիո-
նարներէն մէկ մէծիտիէ նպատակ ըստա-
ցած էր , այս գումարի մէկ չորրորդը
հանեց նպատակ տուաւ իրմէ աւելի կա-
րօտեալներուն . ասոր նման շատերու կը

հանդիպինք այստեղ որոնք յայտարարեն «Մենք ողորմութիւն չենք ուզեր, գործ տուէք մեզի»:

Ատիշ գիւղին մէջ կենդանութեան նշոյլն անգամ չէ մնացած, գիւղին 310 տուները բոլորն ալ աւերակ դարձած են: Գիւղին ժողովուրդը փախած Չնքուշ ապաստանած է ուր թշուառութիւնը մեծ է: Օգնութեան հասնիլ պէտք է այս մարդոց որպէս զի յառաջիկայ գարնան իրենց տուները չիսեն և իրենց երկրագործական գործիքները ունենան՝ աշխատութեան վերականգնելու համար: Մինչև այն ատեն նպաստի պէտք ունին որպէս զի ապրին որովհետև իրենց միակ զբաղումը այգեգործութիւն և երկրագործութիւն է:

Այս նահագին մէջ 15 գիւղ թէեւ սովի սպառնալիքէն զերծ՝ բայց և այնպէս վերին աստիճանի յուսահատական դրութեան մէջ կը գտնուին: Այս գիւղերուն անհրաժեշտ է նպաստել զգեստ, կերակուր, արջառ, երկրագործական գործիք, սերմնացու ևլն: Գիւղերէն շատերը քրդական շրջանակներու մէջ գտնուելով, նպաստի բաշխումը ապարդիւն պիտի ըլլայ եթէ զօրաւոր հսկողութիւն մը ի գործ չի դրուի աւարառութիւնները արգիլելու համար: Պէտք է ընդունիլ որ գիւղերու ընդհանուր կացութիւնը բարւոքման ճամբուն մէջ է, բայց մէն մի գիւղի աղքատը շատ աղքատ է եւ աղքատներու թիւը ստուար է տակաւին:

Կան նաև ուրիշ գիւղեր ալ որոնք մասնաւոր պատճառներով դեռ բարւոքման ճամբու մէջ չեն կրցած ըլլալ:

Ընդունեցէք, վսեմապատիւ միւրօրտ, խոնարհ յարգանքներս:

ԵԳՈՒԱՐԴ Ս ՄԻԱՐՏ

ՄԻՍ ԼՈՆԿ

Անցեալ չաբաթ օր Պուրկաղէն քաղաքս հասաւ ծանօթ Անգլուհի բարերար Միս Լոնկ, որ անցեալ տարուան նպաստներու բաշխման գործը ստանձնած էր

Ռուստուքի հայ գաղթականութեան մէջ:

Ազնիւ օրիւրդը այս անգամ պաշտօն ստանձնած էր տեղւոյս հիւանդանոցի յարակից աղջկանց արհեստանոցը ինչպէս նաև Օրիորդ Արմաւենի Սահակեանի տեսչութեան ներքև գտնուող երկսեռ վարժարանը այցելել ու այն կրկին հաստատութեանց ներքին վարչութիւնը մանրազննին քննութենէ մը անցունելով՝ արդիւնքը տեղեկագրել առ ու անկէ: Միս Լոնկ այս պաշտօնը կատարելէ ետքը այս շաբաթ վերատին մեկնած է քաղաքէս:

ԵՍԱՍԵՐԸ

ԱՂԲԱՏԻՆ ԱԼ ԹՇՆԱՄԻՆ Է

Մարդասիրական պարտաւորութիւն մը կատարուած պահուն անձնական ատեւութիւնը պաշտի ոչ թէ լուել՝ այլ պապանձիլ, մանաւանդ երբ յանիրաւի է այդ ատեւութիւնը և զայն յառաջ վարողը մարդասիրական զգացումէ զուրկ է: Այսօր եսասէրը իր անձնական փառքի ատեւութիւնը այն աստիճան առաջ տարած է, որ գործուելու վրայ եզող մարդասիրութիւն մը մահացուցած է: Մեր այս ըսածը սա ցաւալի ճշմարտութեամբ կը հաստատուի թէ, այն կարգ մը գլխաւոր անձինք, որոնք ասկէ մինչև մէկ շաբաթ առաջ իրենց վաճառատունները գինոյ խեղճերուն ու առույր հացի կարօտներուն կ'ողորմէին, առ ոչինչ համարելով իրենց համար յերկրուած սուտերը, տեսնելով որ հիմա ալ յատկապէս հրահանգուած կարգ մը սրիկաներէն լուկոսն յանդիմանուիլ ու նախատուիլ, այլ ևս դադրեցուցած են իրենց օգնութիւնները, ըստ որում աւին բոն չափ մը ունի և եղած անարգանքներն ալ չափը անցուցին:

Հիմա ո՞վ է տուժողը. — գաղթական և տեղացի աղքատը, որոնք անխտիր կը միսիթարուէին:

Անշուշտ այս աղքատները անօթու-
թենէ ու ցրտէն պարտաւոր օրհներ-
շախտի կարգան իրենց օգնութեան ձեռք
կարկառողները սրդողցնող անխիղճ եսա-
սէրին գլխուն, որ 'ի հարկէ, տարած
այս յաղթանակին վրայ հիմա ուրախ
զուարթ իր կրակարանին դէմը նստած
կը սաքնայ:

Ապրիլ, ու վարձքը կատար ըլլայ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վատնա, 5 փետր. 1898

Խմբագիր Տէր,

Հայերիիդ հրատարակութեան ա-
ռաջին օրէն ի վեր ուշադրութեամբ հե-
տեւած եմ Ձեր անկեղծ ուղղութեան,
ու գոհ եմ յայտարարելու սր այդ ուղ-
ղութիւնը պատիւ կը բերէ Ձեզ եւ սի-
րելի Ազգիս: Ճշմարտութեան սիրահար
ու մոլութեան մահացու թշնամի, ան-
ընդհատ ելեմուտ կընէք ընկերական
բոլոր խաւերուն մէջ, ու հոն ականատես
ըլլալով բոլոր այն աղտոտ ու ամօթալի
մոլութեանց, որոնցմով լեցուն է գլո-
բախտաբար շատերուս կեանքը, անշա-
հախնդիր ոգւով մատնանիշ կընէք զա-
նոնք, ձազկելով ու խարազանելով անոնց
հեղինակները որոնք որ ըլլան: Ձեմ
կարծեր որ այս ուղղութիւնը իր բա-
րերար ազդեցութիւնը չունեցաւ ցարդ:
Ըսածիս ճշմարտութիւնը կրնայ հաստա-
տել անգամ մը եւ նաեւ Բոթոփիկեան
վերջին ազդարարութիւնը, որ երեցա-
թերթիդ անցեալ թուոյն մէջ տեսնելու
բան էր կիրակի գիշերուան կարդալա-
հութիւնն ու կանոնաւորութիւնը Սուրբ
Սարգիս եկեղեցւոյն մէջ ներկայ հան-
գիստտեսներուն վրայ:

Ապրիլք: Շարունակեցէք այդ ուղ-
ղութեամբ քայել, ահա մարելով բոլոր
խուչնդոտները որոնք ձեզ յուսահատե-
ցնելու կը նկրտին: Ձեր ապրտակները
բարոյական մէկ մէկ դաս կը պարունա-

կեն իրենց մէջ: Մի վհատիք, ողջամիտ
հասարակութիւնը Ձեզ զօրավիզ ու քա-
ջալէ: պիտի ըլլայ միշտ:

Ընդունեցէք Խմբագիր, մեր
խորին յարգանքները:

Մնամք են են:

Մ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ

Հայերի — Տիար նամակագրին մեզ
նկատմամբ յայտնած համակրանաց փոխարէն
մեր անկեղծ շնորհակալեքը յայտնելով, այս
առթիւ կը կրկնենք թէ երբէք չպիտի շե-
ղինք այն ուղղութենէն որ մեր նշանաբանը
եղած է ցարդ եւ որուն աւելի սերտի: պի-
տի փարինք, ցորչալի մեր բարեկամներն ու
համակրողք աջակից ու զօրավիզ ըլլան մեզի:

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՁՈՐԵՌ

Այս տարի յունիս ամսոյ մէջ զե-
րօյէն վար ցուրտ ըրած է յեգիպտոս
անանկ որ բնակիչք ստիպուեր են մուշ-
տակ հագնիլ, ֆանելա ձեռնոց դնել ու
տուներու մէջ կրակարան վառել:

Պիպայի մէջ ձիւն, Աղեքսանդրիա
կարկուտ եւ Գահիրէ շարունակ անձրեւ:
Վերին եգիպտոսի ուղիւորները կը խօսին
եղեր Լուքսորի մէջ եւ ուրիշ տեղեր տի-
րող ցուրտին վրայ: Ֆէյյումի մէջ ձիւն
տեղացեր է եւ անոր նման բան մըն ալ
խառնուած է եղեր անձրեւին ու կարկու-
տին 'ի Բօս Սայիտ: Տելթային բերանը
սառ անսնուեր է եւ 'ի Հելուան, զեյտ
30ի առաւօտուն օդաչափը զերօհն վար
3 աստիճան կը ցուցնէ եղեր:

Այս անտալոր ցուրտը իր փաստերը
հետեւանքները ունեցեր է երկրին բու-
սականութեան ու հողային արտադրու-
թիւններուն համար:

Վէսէլօ հայ թատերական խումբը այս
գիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներ-
կայացնէ Երկու Յիսնապետք անուն տրամը
3 արարուած ու Հաստախօս Սափրիչը 2 ա-
րար կատակախաղը:

Նոյն խմբին կողմէ փորձի դրուած է
«Աշխարհի շրջանը 80 օրուան մէջ» խիստ
հետաքրքրաշարժ մեծ թատերախաղը:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

ՏԱԵԱՆ . . . ՂԱՐԱՊԻՏ ԱՂԱ

Կէշէնէրտէ՝ պիր շէհրին Եէնի-Մահալ-
լէ գահվէրանէլէրինտէն պիրինտէ՝ տէօրթ
պէշ քիշի շու Եօլտա պիր մուհապէրէտէ պու-
լունմագտա իմիշլէր :

— Նէ՞ տիւշիւնիւօրսըն , Ղարապիտ
աղա :

— Պրէ ղա՛րտաշ , նիճէ՞ տիւշիւնմէյիմ .
շու մէլմէքէթէ կէլտիւ , պօշ տուրմայրպ
պիր խէյֆէ թուլթուլիս , Եիւզ Եիւզ էլլի
նաբըլեոն պիր բարա պաթըրտըն . շիմտի
Ըսթանպըլա կիթմէիս իստէրիմ , թէզկէրէմ
Եօիս , վարըպ իրիճա իտէրսէմ , պիր թէզկէ-
րէ ալապիլիմ մի տէրսինիլ :

— Պանա սօրարսան՝ ալապիլիւսին :

— Պանա տա սօրարսան՝ ալամզսըն ,
պօշունա Եօրուլաճագսըն :

— Նիշի՞ն . . . վէրմէզլէ՞ր մի :

— Վէրմէզլէր շիւնքիւ , սէնին գահ-
վէ թուլթուլեղունտան իսապէրլէրի վար :

— Էյ Նէ՞ օլմուշ :

— Նէ՞ օլաճագ , պիլմէյօրսըն քի թա-
պէլալարտա Էօյլէ պիր թագըմ՝ էրմէնիճէ
շէհեր վէ տաղ իսիմլէրի գուլլանմագ Եա-
սագ տըր :

— Տէսէ՞նէ , օ պիլիմ՝ պաշըմըզա քա-
պէլա օլմամըշ՝ թամ՝ պէլա օլմուշ :

— Էօյլէ Եա՛ :

— Պէն տէ՝ «Էֆէնտիմ , խէյֆէնին
իսմի «Արարատ» տէյիլ՝ անարատ ըտը տէ-
րիմ . Եանի հալիս խէյֆէ տէմէք տիր :

— Պա՛գ արթըզ գանտըրապիլի՞րմիսին :

— Տուրո՛ւն . Էօյլէ իսէ՛ շու՝ պուրայա
կէլմէիս իշիւն պիզէ ղօլայլըն կօսթէրէն .
Ղօնսօլոսունա վարայլմ՝ կէտէյիմ , հալիմի
իֆատէ իտէյիմ :

— Օ պաշգա , օնա տէյէճէք Եօգ :

— Հայտէ՛ Մայտիրոս աղա , պուրտա
պօշ պօշունա օթուրաճաղընա՝ պէրապէր
կէտէյիմ :

— Ըճապա պէճէրէպիլի՞րմի յիս :

— Պէճէրէմէյէճէիս Նէ՞ վոր քի :

— Պախալըմ էն էվվէլ ղարուճու
պիզի ղապուլ իտէճէիս մի :

— Էտէր , Էտէր , օ էյի ատամ՝ տըր .
Հայէթ , մուշու ղօնսօլօղ պուրտա Եօիս տէյէ-
րէք պիզի Եօլա ղօյմագ իստէրսէ պիլէ՛ պիզ՝
«Կէրի տէօնմէսինէ պէսլէրիզ» տէյիպ՝ տա-
յանըպ տուրուրուիս :

— Էօյլէ իսէ՛ տաԵա՛ն Ղարապիտ
աղա :

— Հէյ ղարտաշ , տաԵանմալը Եա՛ ,
Ըսթանպըլտա իքէն պիզէ Ղարապիտ Էֆէն-
տի տէյօրլար ըտը , պուրտա իսէ Ղարապիտ
ալա տէյօրլար :

— Զարար Եօգ Ղարապիտ աղա , տա-
Եանմալը , ինչալլահ՝ Սթանպօլա կիթտիղին-
տէ Եինէ Ղարապիտ Էֆէնտի տէրլէր սանա :

— Նէ հալ իսէ , գալգ Մայտիրոս
աղա , տիւշ Էօնիւմէ պախըլըմ :

— Հայտէ կէտէլիմ , վախըթ կէշիւմիշ
օլուրուիս :

— Պու միւքեալէմէտէն սօնրա իքի
արգստաշար գահվէտէն շրգըպ կիտէրլէր
վէ Եարըմ սաաթտան թէքրար ափտէթ ի-
տէրլէր :

— Կէլ նագլ է՛թ պագալըմ՝ Ղարա-
պիտ աղա , Նէ՞ Եաբտընըզ :

— Ղա՛րտաշ , պիզ տէ՛ Մայտիրոս ա-
ղայը պիր ատամ՝ պիլտիս տէ Եանըմըզա
ղաթտըն . սատէ պալգապաղը ըմըշ Եա՛ ,
աղղընը աշըպ ըըճըգ բաթըրտը պիլէ Էթ-
մէտի :

— Ղա՛րտաշ , վախըթ գալմատը քի՛
աղղըմը աշայըմ՝ օրայա կէտէր կիթմէզ՝ Ղա-
րապիտ աղա գաբուճուլա տէտի քի՛ «մուշու
ղօնսօլօս Էֆէնտիյէ վար սէօյլէ քի՛ Նէ՞ Եա-
բաճաղըզ . օ սիղին ղափաղարընըզ պիզի պու-
րայա կէլմէիս իշիւն ղօլայլըն կօսթէրտիլէր
Իսէ՛ շիմտի տէ կէրի տէօնմէնին պիր ղօլայ-
ընը կօսթէրսինլէր . պիզի Ըսթանպըլա կօն-
տէրսինլէր , Գաբուճու պու սէօղիւ իշիտիր
իշիթմէզ , Կօօօ . . . Ն տէյիպ պիզի տիշարը
աթտը վէ գաբըյը գաբատը . պէն օ վախըթ

բէնտիսինէ «Ամանըն տաեա՛ն Ղարապիտ աղա, տէտիմ՝ իսէ տէ՛ պէնի տիննէմէտի:

— Էյ շիմտի Մարտիրոս աղանըն գաւաթհաթը եօպ. սառա տաեա՛ն Ղարապիտ աղա տէտիղի վապըթ պրագըպ կէլմէմէլի իտին:

— Ատա՛մ, շափայը պօշայըն, պուատամ իբի քէլէմէ պիլէ տէմէտի, եանըմա պօստան գօրգուլուղու ալմըշ ըմըշմ:

— Շիմտի նէ՞ եաբաճագսըն:

— Եալընըզ պաշըմա՛ թէքմիլ յօնսօսխանէլէլի կէպէճէիմ, թա քի պիր թէգքէրէ ալընճախ:

— Սէնին կիպի՛ պաշգալարը տա չալըշըլար ամա՛ մուվաֆֆագ օլմատըլար, պօշ պօշուեա եօրուլմա:

— Խա՛յըր. կէտէճէիմ՝ պօշա շըխաճաղըմը պիլէրէխ՝ թէքրար կէտէճէիմ:

— Օ պաշգա, էօյլէ իսէ՛ տաեա՛ն Ղարապիտ աղա:

ԽԱՌՈՒԱԾ ԱԿՆՑԻՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԷ Ի Կ. ՊԼՈՒՍ)

ՊԼՈՒՍ ԺԴ

ԵՐԿՐՈՐԳ՝ ՄՈՒՐՀԱԿԸ

Պատրիկ, որ առջի իրիկունէ իսկ Բմուրհակ մը պատրաստեր ու տիրոջը ըստօրագրել տուեր էր, հետեւեալ առաւտ կանուխ՝ փութաց վաճառատունը գտնուելու, որուն դրանը առջե կը սպասէր, ու երբ Աստիւր աղան խանութը բանալը տեսաւ, անոր մօտենալով խնդրեց որ առանձինն քիչ մը տեսնուելու համար Եէնի-ճամիի սրճարանը երթան: Աստիւր աղա հաճութիւն տրուաւ ու իր աշկերտին, Գանիկին մէկ քանի հրամաններ տալէ ետքը Պատրիկին հետ վերոյիշեալ սրճարանը գնաց:

— Երէկ բաւական զբօսեցանք, ըսաւ

Պատրիկ, ծխատուփը Աստիւր աղան հրացունելով, ու գինին ամենուս ուլ խելքը գըլխէն առաւ. վասն զի երբ դուք անգիտութեամբ 105 ոսկինոց մուրհակը կը պատռէիք, ես ալ, գինին տղգեցութեան տակ, մէկէն ՚ի մէկ չի կրցայ մտաբերել զձեզ արգիլելու համար ձեռքերնիդ բռնելու:

— Պէյիս չի կայ, ապ սէնէթին զիյան ըլլալովը Միհրան աղան իր պարտքէն խալըսած է տի ըսէք. նամուսու թիւճճարը խտանի բան մի հէշ մուտքէն կանցունէ՞:

— Միհրան աղան ատանի բան մը մտքէն անցուցած ըլլալը, ու ընդհակառակը՝ պարտաճանաչ անձ մը եղած ըլլալը հաստատուելու համար ահաւասիկ իր կողմէ ըստօրագրեալ երկրորդ մուրհակ մը ձեզի կը յանձնեմ:

— Երկրորդ մուրհակ մի՛:

— Այո՛, ահաւասիկ:

Եւ մուրհակը թղթապանակէն հանելով՝ անոր յանձնեց: Ակնցիին բերանը բաց մնաց:

— Միայն թէ, կրկնեց Պատրիկ, ըստ օրինի երկտող մը պիտի առք մեզի, յայտարարող որ՝ եթէ երբէք Մայիս 16 թուականը կրող առջի մուրհակը գտնուի, արժէք մը չպիտի ունենայ:

Աստիւր աղա, մուրհակը ուշադրութեամբ աչքէ անցունելէ ետքը՝ պատասխանեց — Ֆախաթ, ըստմանքնիդ գիտէք ուր, ան սէնէթը զիյան արինք. Գաբրէլ հրեշտակին պօռուն փչէ պիլէ իսէ՛ ետ գալիք չունի:

— Գիտենք այդպէս ըլլալը, բայց օրինաւորութիւնը յարգած ըլլալու համար կ'առաջարկենք:

— Պատկեր աղա, Միհրան աղան աս ալիճէնապութիւնը եւտի ճէտտոս չի տի մոռնայ. պինաէն ալէյհ, հըմայեկս իմ ձեռքս ատ պաթալնամէն տի գրիմ ու պիլմուխապէլէ թէսլիմ տի անիմ:

— Շնորհակալ ենք:

Աստիւր աղա՝ սրճեփին կաղամար գրիչ ու քիչ մ'ալ թիւղթ բերել ապէ ետքը՝ հետեւալը գրեց.

« Պատճառ պաթթածնամէիս սա է ուր՝

Սէնէ պին սէքիզ եիւզ եէթմիշ . . . վէ մայիս ճն ալթը թարիխով թիւյպէնտճիի թիւճարը միւթէպէրանսէն վերապայական Միհրան աղային սահիպի իմզայիս թէսլիմ արած տօխսան պիր կիւն վատէլի էմրէ մուհարրեր մէկ գըթա 105 նիրանոց սէնէթը սէհվէն զիյան արած ըլլալու միւճիպ՝ տս շուք քայի աճիզանէմովս պէյան կանիմ ուր՝ իքինճի սէնէթ մի ախզ ու թէսլիմ առած եիմ . պինսէն ալէյհ, էռջի սէնէթը թարիխէս իթիպարէն քեռէնլիւմէքիւն հիւքմով տի մունայ վէ փուլի մի տիյէթ չի տի ունենայ :

Ծառայ ծառայիցն Աստուծոյ

ԱՍՏԻՐ ՏԻՒՏԻԿԵՆՑ

Ըսթընպօլ, Պախէ զարու

Այս միջոցին Մաթոս աղա և միւզէվիր Թապոս նոյն սրճարանէն ներս կը մտնէին, որոնք խանութ հանդիպելով Գանիկէն տեղեկացած էին Աստիւր աղան հոն գտնուելը:

— Աղաներ, թա՛մ սըրային թէշրիթ արիք, ըսաւ Ակնցին թուղթը Մաթոս աղային ներկայացնելով, սա պաթթածնամէին ճըմար շահիտ տըլլիք վէ իմզա տի անէք:

Մաթոս աղա՝ Աստիւր աղաի հետ փոխանակած ակնարկովը հասկցաւ որ նոր մուհակ մը առնուած է, ուստի առանց գործը յայտնի ընելու՝ թէ ինքը իբր վկայ ստորագրեց և թէ Թադոսին ոտորագրել տուաւ:

— Հըմայեկս սա սէնէթները իրարու թէսլիմ ուր արինք՝ արթըն ըռահաթ ինք, անանկ չէ՞ մի Պատկեր աղա:

— Այո՛,

— Մեղուրս ալ նամուս տարիքսիս վըրայ խօսք կուտամ ուր՝ ինչալլահ մեր ճէմիյէթը ըլլալէն շաքաթ մի սըղրա խայնաթա աղան վէ տիւտիւ հանումին ձեռք—պագի գնացած օրս սա տէյին սէնէթին տի պատուիմ:

— Կ'ուզէք պատուեցէք, կ'սզէք մի պատուէք. Միհրան աղա պայմանաժամին ը-

ընալուն՝ պատրաստ է իր պարտքը հաստացանելու:

— Պէրիսուտար ըլլի: Իշթէ էֆէնտըմ, այս օրէն կըսիմ՝ ուր՝ մենք վաղը առտու Գուրու-չէշմէի եալու. սօխախին պայական տիւն մի խթիճար տի անինք. 15 օրէն վարդափառ տըլլի. անոր դէմու կիրակին ճէմիյէթնիս կ'ուզինք:

— Այս մասին քանի մը օրէն կրնանք ձեղի պատասխանել:

— 2ը գիտիմ էֆէնտըմ, մի միւզուլաղալը մէսարիֆաթի էսամէ մի բանաք. էս էկէր 105 նիրանոց պարտքը էնկէլ տըլլի մեր թէքլիֆին միւճիպ ճէմիյէթնիս իրեք շաքաթէն ընելու՝ ըսէք Միհրան աղային ուր՝ Աստիւր աղա՝ ան տօխսան պիր կիւն վատէլի սէնէթը պիւս կիւզէշթէ ալթը այ վատէի կու դարձնիմ:

— Այդ ալ կրմայնինք Միհրան աղային և պատասխանը կը բերինք ըսաւ Պատրիկ:

Ու մեկնեցան սրճարանէն: Նոյն իրիկունը Պատրիկ Պոյաճի դիւզ գնաց տիկին Միհրանի հետ խորհրդակցելու:

(Շար.)



Երկու Տիկնայք

Ս. Սարգիսի Երկու շաքաթի առտուն

— Շողակաթ հա ըմ, երէկ գիշեր պսակ սէյիւր ընելու հա՛խար ժամ գացի՛ր,

— Մէկ հատին հոն գտնուեցանք, ան ալ հսկումի պէս բան մը ըրին:

— Աս ի՞նչ ըսել է:

— Ի՞նչ ճանաչում եմ, առջի բերան ժամէն ներս մտանք նէ՛ տաճարին մէջ առաջ խորանին խանութիւն մինակ կը վառեր կոր. մենք մեղի, գալու ըլլան նէ մօմերը կը վառեն ըսինք, մէջ մըն ալ նայիս՝ «կուգան կոր» տէյի ձայն մը առինք, գաւիթը ելանք. շնորհքով հագուած սգուած թախըմ մը եկաւ, վրանուն թէֆարիկն հոտէն քիթերնիս ինկաւ, էրիկ մարդիկ կէս թւիս պոյին խըտար սեւ շարիաններով, սեւ լաթերով, 5—10 ֆրանքնոց քաւաթներով, կնիւ մարդիկ ալ ճառ շարերու մէջ փաթտուած, ամենքն ալ կըճըռը վրան նոյ բօթիները հագած ու ձեռքերնին կանոյ երմանգեր վրած էին: Ասոնք ժամէն ներս մտան չի մտան, տէր պապան մութ տեղը կարդալը պաշլայեց. առջի բերան «եկեացէ» դիտցանք, քա նայեցանք քի խայիւր, պոսակ կընեն կոր. ժամկոչին հարցուցինք որ՝ առ ի՞նչ է. պսակ է մի հսկում. մոմերը չի վառէ՞ք. ամեն պսակ ալ առանձն մութին մէջ ըրին. — Խա՛յըր, ըսաւ մարդը, մեկալ պոսակներուն ատենը ճառերը, խանութիւնները ու խորաններուն մոմերը բութին վառուեցան:

— Էյ ի՞նչու ատենը համար չեն վառեր կոր եղեր:

— Հարցուցի նէ՛ ըսաւ քի, աղքատ չըլլալով՝ ձրի պոսակուիլ ուզող ասպիչիմ մարդոց համար մինակ մէկ խանութիւ մը կը վառեն եղեր:

— Ձրի մի՛... ատ խտար տառաթ ունեցողները ձրի՞ պոսակուեր են.

— Պէլի. 1000ներով ոսկիներու հետ կը խաղան եղեր խօսքով ամա...

— Շիտա՛լը աղւոր բան. պարէ տէր. տէրը տուններնին տանէին հոն պոսակուէին քի ձրի ըլլալը մարդ չիմանար:

— Բէք շատ ուզեր են ատանկ ընել ամա՛ տէր պապան չէ գացեր:

— Ինչո՞ւ.

— Ինչո՞ւն ի՞նչ ըսել է. մարդը հէմ ձրի պոսակ ընէ հէմ անտար տեղը ա-

տոնց ո՞տքը պիտի երթայ աս ձիւնին ձմեռին:

— Կայնէ նայիմ, ասանկեերուն ի՞նչ կըսէին...

— Ալթը գալալ իւսթիւ շէշանէ:

— Հա՛հ, թամամ, այսինքն մէջի—գօֆ, պօռու...:

Բոժոժիկեան Ծանուցում

Սիրելի՛ ընթերցողք,

Միաբերան ասացուք, Աստուած համբերութիւն պարգեւեցէ,

Ա. Այն մէկ բանի հազըր նազըր փեսաներուն, որ այս շաբթու Պոլսոյ թղթաբերին ուշանալէն՝ թրախօմային կէս ճամբան մնացած ըլլալուն պատճառաւ չի կրցան ա՛մուսնանալ:

Բ. Ձրի պսակ ընել ստիպուող տէր պապաներուն:

Գ. Ճէհէգնին անգամ շինող փարալը կնքահայր մը չի գտնելնուն պատճառաւ այս շաբթու ալ պսակուիլ չի կարողացող մէկ երկու հարսնձու օրիորդներուն ու փեսանձու պարոններուն:

Դ. Հարսնիք մը ամբողջ ընտանիքին 300 զրուշի կոշիկները պատրաստող բայց երեք գաւաթ քօնեաքով տօլապը մտնող խուրնազ կոշիկարներուն:

Ե. Ալթը գալալ իւսթիւ շէշանէ փեսի մը հագուստները պատրաստող ու «կէլմէզ այլն պաշընտա բարանը ալաճագսըն» խօսքերը լսելով ճամբուող դերձակ խախա Լազարիին:

Ձ. «Հարսնիքին երեքշաբթի օրը արթըն չէթէլէզ պիտի թէմղցնենք» խոստումն հաւատալով 50 օխա հացով նորէն քիթէն բռնուող հացագործ Պ. Սէրսէմեանին:

Ե. Վերջապէս, հայերէն սորվելու համար հայերէն չգիտցող դասատուին ձեռքը իյնող երկսեռ աշակերտաց համբերութիւն պարգեւեցէ.

— Ամէ՛ն:

ԻՐՔԷՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՒՆՏԻ

Գըշ կէճէլէրինէ մախսուս զայէթ կիւ-
լիւնճլի վէ էյլէնճէլի իշպու գօմէտի 32 սա-
հիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէ-
նիճէ վէ լիսանը թիւրքճէ օլարագ վարնատա
թիւթիւնճիւ տիւքքեանլարընտա 30 սանթիմ
ֆիաթլէ սաթըլմագտա տըր: Թաշրալարտան
իսթէյէնլէր եալընըզ 30 սանթիմլիք բօսթա
բուլը զիրտէ մուհարրէր նամըֆա կէօնաէր-
մէլի տիրէր:

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ, Ձնճի Ուչասթ, 1104

ՎԱՌՆԱ

Պուհտան պէօլէ սաիր էյլէնճէլի վէ ֆա-
լիտէլի գօմէտիլէր տախի բէյտէրբէյ նէշր •
լուհաճաղը պէյան օլունըր:

ՃԱՇԱՐԱՆ ԵՐԱԿԱՆ

Սոյն ճաշարանը այս անգամ Տիար Գէորգ
Փափազեանի տնօրէնութեանը յանձնուած է,
ուր ըստ առաջնոյն կը գտնուին համագամ
կերակուրներ: Պատուարժան յաճախորդք
խիստ գոհ պիտի մնան թէ կերակուրներէն և
թէ գիներու անմրցելի աժանութենէն:

Վաշրկեանական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր.ի կը տպագրուի և ա-
նոր տուիին մէջ կը գտնուի Այցեատման գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տէտրա-
մը, որուն կողքին վրայ այցեատման տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանթիմ-
յաւճնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 և 15 սանթիմնոց նա-
մակադրօշմ կ'ընդունուի: Կանխիկ:

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница „Взаймность“—Варна.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒՆ

Ա. Զարպհանէիւան

ՎԱՌՆԱ

Կը վաճառէ Պուլիսի, Թիֆլիսի եւ
Վիէննայի մէջ հրատարակուած հայերէն
գլխորդական և պատմական գիրքեր,
գնումն և վաճառումն ամեն տեսակ
նամակադրոշմերու. նաեւ գլխորդական
պիտոյքներ: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:

2



ԳՐԱՆԿԱ

Ա. ՊԱԳԱՅԻ

Կամ Զրարճալի Բաղդադոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց զը-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գիմել մեր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԲԵՐԻՆ ՏՂԱՅՈՑ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով,
կը պարունակէ ժանկական գուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր տաղներ և կրնայ
երախայներուն ծառայել նաեւ իւր ընթեր-
ցանութեան գիրք որուն պարունակութիւնը
եքօնեցուցիչ և հրահանգիչ է միայնակապի
անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մա-
քուր և կազմը զայեւուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,

2րդ. թաղ, թիւ 1104: